


ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (195, 196, 197)

#3, 4, 5 մարտ, ապրիլ, մայիս 2022




Երևանի Կոմիտասի անվան
Պետական Կոնսերվատորիա

Yerevan Komitas
State Conservatory

Ереванская государственная
консерватория им.Комитаса

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ԼՐԱՑԱՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
107-ՐԴ
ՏԱՐԵԼԻՑԸ



Հայ որբերը հավաքվում են լուսանկարվելու Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Ամատուլիայի քոլեջում, որը 1918 թվականին Մերգիֆոնում ապաստան է տվել ավելի քան 2000 որբերի: Հայոց ցեղասպանության հետևանքով հարյուր հազարավոր հայ երեխաներ որբ մնացին, շատերը դարձան մահմեդական և ստացան թուրքական անուններ: (Լուսանկարը՝ Յուլազ Դիլիյանի)


ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ
ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ
ԱՌԹԻՎ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարանի 100-ամյա հորեղյանը



ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի վոկալ անսամբլ
խմբավար՝ Արտաշես Բաբուրյան

2



Էդվարդ
Միրզոյանի
անվան
պատանի
կոմպոզիտորների
հանրապետական
9-րդ մրցույթ

8

“Навстречу весне”:
концерт Анны Дьячковской
в Санкт-Петербурге



Софья Микаэлян и Анна Дьячковская

6

Շնորհավորում ենք կառնեց
մայրություն
և
գեղեցկություն քոնի
տաքիվ



Ամենագեղեցիկ բանն աշխարհում մոր աչքերն են, թեկուզ
միայն մայր ունենալու համար արժեն աշխարհ գալ:
ԱՎԵՏԻԸ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԱՐՏԻՍՏ ՌԱԻՍԱ
ՄԿՐՏՅԱՆ



4



Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյա հորեյակը

1 Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն այս տարի նշում է հիմնադրման 100-ամյակը: Այս առիթով, ապրիլի 21-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցավ համերգ նվիրված ՀՀՄՍՀ-ի հորեյակին:

«100 տարվա մեջ 60 տարին կարևոր ժառանգություն է. հնչեցին արվեստի ներկայացուցիչների, բազմավաստակ մանկավարժների անուններ, որոնք իրենց ստեղծագործական երևակայության սահմաններում ուրվագծված մասնագիտական պահանջմունքների դրսևորման իմացական բաղադրիչը կապել են Մանկավարժականի հետ: Հորեյակնական տարին ապացուցեց՝ ֆակուլտետը շարունակում է առանձնանալ բարձրաճաշակ միջոցառումներով, որտեղ կուտակված են մասնագիտական հույզերի, իմացական պահանջմունքների, ստեղծագործական կարողությունների և մանկավարժական կրթության հարուստ արժեքանություն», - իր խոսքում նշեց ՀՀՄՍՀ ղեկավար Սրբուհի Գևորգյանը:

Միջոցառման ընթացքում Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սարգիս Էլբակյանն անդրադարձավ ֆակուլտետի ստեղծման պատմությանը, նշեց անվանի հիմնադիրներին ու մանկավարժներին (Յիգիյա Բրուտյան, Էմմա Ծատուրյան, Յակով Զարգարյան, Արմեն Անանյան, Էլենա Գիլինա, Մանուկ Մանուկյան, Էդուարդ Էլբակյան, Կառլեն Թովիշյան, Ռոբերտ Բաբուրյան, Լորենտ Աղասարյան, Ժողովրդական և վաստակավոր այլ արտիստներ, նշանավոր երաժիշտներ ու ստեղծագործողներ), ովքեր կառույցի գործունեության 60 տարվա ընթացքում մեծ ներդրում ունեցան ֆակուլտետի զարգացմանը: Դրա հետ մեկտեղ մեծ նշանակություն տալով այն փաստին, որ

ֆակուլտետի նվիրյալների գործն այսօր էլ պատվով շարունակում են երիտասարդ սերնդի տաղանդավոր գործիչները:

Համերգի ընթացքում կատարողական բարձր արվեստով և վարպետությամբ հանդես եկան ինչպես Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսները, որոնցից շատերը նաև միջազգային և համրապետական մի շարք մրցույթների դափնեկիրներ են, այնպես էլ ուսանողները:

Ելույթ ունեցան Գեղարվեստական ֆակուլտետի վոկալ, քանոնահարների, ալորդետնահարների անսամբլները: Համերգի ընթացքում հնչեցին հայ և արևմտաեվրոպական կոմպոզիտորների՝ Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Ռոմանոս Մելիքյանի, Խաչատուր Ավետիսյանի, Առնո Բաբաջանյանի, Ստեփան Լուսիկյանի, Արմեն Սմբատյանի, Յոզեֆ Հայդնի և այլոց ստեղծագործությունները:



Սրբուհի Գևորգյան



Սարգիս Էլբակյան



ՀՀՄՍՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի քանոնահարների անսամբլ, նվագակցող՝ Ռուբեն Կարասեֆյան

Խմբագրական

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՎԱՆԴԵՍ Ա. ԲԱՐԱՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՒԵՃՈՒՄ

Երևանի Ա.Բաբաջանյանի անվ. պետական երաժշտամանկավարժական թուխի առթյան լի է համերգներով և ուշագրավ միջոցառումներով: Բացառություն չդարձավ թուխի 3-րդ կուրսի փողային և հարվածային բաժնի ուսանող Աշոտ Ժամկոչյանի անհատական ցուցահանդեսը, որը մեծ ոգևորություն և հետաքրքրություն առաջացրեց և՛ ուսանողական, և՛ դասախոսական կազմի շրջանակներում:

Հարկ է նշել, որ ցուցահանդեսը տեղի ունեցավ թուխի տնօրեն՝ Արմեն Հարությունյանի անմիջական աջակցությամբ, որի վերաբերյալ Աշոտն ասաց.

- Իրականում ես անգամ չէի պատկերացնում, որ ինձ այդքան մեծ ուշադրության կարժանացնեն և կազմակերպչական ամեն հարցում աջակցություն կցուցաբերեն: Առաջին անգամ, երբ գնում էի տնօրենի հետ կիսվելու իմ զաղափարով, շատ լարված էի և անվստահ, սակայն հենց սկզբից զգացի պարուն Հարությունյանի դրական տրամադրվածությունը և այդ փաստից անչափ մոտիվացվեցի ու զգացի, որ իմ երազանքը կարող է իրականություն դառնալ:

Թուխի տնօրենի, փոխտնօրեն՝ Աննա Աղաջանյանի, դասախոսական կազմի խորհուրդների, հսկայական աջակցության և Աշոտի համառության և ոգևորվածության շնորհիվ ցուցահանդեսը կայացավ 2022 թ. ապրիլի 26-ին և ուսանողների, դասախոսների օրը լցրեց մոր տպավորություններով և էմոցիաներով:

Նշենք նաև, որ ցուցահանդեսը կայացավ կենդանի երաժշտության ներքո: Աշոտին այդ հարցում օգնության հասան իր համակուրսեցի-ֆլեյտահար Մարի Հովհաննիսյանը և թուխի լարային բաժնի ուսանող Սամվել Սիրունյանը: Մարին կիթառի, դաշնամուրի և Սամվելը ջութակի գեղեցիկ հնչյուններով հաճելի մթնոլորտ ստեղծեցին ցուցահանդեսի համար:

Աշոտը ցուցահանդեսից հետո շատ տպավորված էր և անընդհատ ասում էր, որ մեծ հետաքրքրվածություն չէր սպասում մասնակիցների կողմից և մեկ րոպե ազատ չի եղել ցուցահանդեսի ընթացքում, քանի որ բոլորն ունեին նկարների հետ կապված հարցեր, որոնք ցանկանում էին տալ:

Աշոտն ասաց, որ նկարչությունն իր համար ինքնաար-

տահայտվելու միջոց է և թույլ է տալիս ասել այն, ինչն այլ կերպ չէր կարողանա ասել: Եվ կարողավ թուխ կարծիքները, որոնք գրվեցին հատուկ տետրում ցուցահանդեսի ընթացքում, Աշոտը հասկացավ, որ իր կողքին կան մարդիկ, ովքեր ցանկանում են հասկանալ այն, ինչը նա ասում է կտավների միջոցով: Դեռ չգիտի, կդարձնի նկարչությունը մասնագիտություն, թե կթողնի հորի, բայց վստահ է, որ թուխից ստացած դրական էներգիան հիմք կդառնա մոր կտավների ծնունդի համար:

Իսկ իր առաջին ցուցահանդեսից ստացած տպավորությունները դեռ երկար ժամանակ վառ կմնան և անգամ տարիներ անց հիշողությամբ ետ կտանեն իրեն Ա.Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական թուխը:

ԿԱՐԻՆԵ ՄԻՐԱՔՅԱՆ
Երևանի պետական Ա.Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժական թուխի 3-րդ կուրսի ուսանող, ֆլեյտահար

Седьмая симфония Авета Тертеряна в Московской филармонии

21 марта в КЗЧ в исполнении Российского национального молодежного симфонического оркестра прозвучит Седьмая симфония Авета Тертеряна (1929–1994), о котором София Губайдулина говорила, что «наисильнейшим свойством этого художника является способность вызывать к живому звучанию громадные сферы души человека и бесстрашие, проистекающее от уверенности, что путь к подлинному есть одновременно и путь к сверхсознательному». Седьмой симфонией (1987) продирижирует Александр Лазарев, которому и посвящено сочинение.

Также в программе – музыка Арама Хачатуряна: Скрипичный концерт (солист Никита Борисоглебский); Танец, Adagio и Вакханалия из балета «Спартак».

Один из крупнейших симфонистов второй половины XX века Авет Тертерян – автор восьми симфоний, охватывающих период с 1969 по 1989. «Доброта и любовь оказываются как бы «распатыми» в треске вселенского крушения Седьмой симфонии, пожалуй, самой мудрой в своем повествовании, не вызывающем ни радости, ни боли от реальных событий. В этой симфонии – смерть, в течение веков лишенная слез утраты, и рождение, еще не вызвавшее восторга новой жизни. Седьмая стоит среди гибели и рождения, поднявшись над проблемами дня своей мудростью восприятия, обращенного в бесконечность прошлого и бу-



дущего», – пишет Рубен Тертерян, музыковед, сын Авета Тертеряна.

«Важнейший компонент музыки Тертеряна, душа этой музыки – время, протяженность звучания. Звук, возникший из тишины, которая, в свою очередь, есть не что иное, как звук», – говорил Геннадий Рождественский, продирижировавший осенью 1982 Четвертой и Пятой симфониями Тер-

теряна – сперва в БЗК, затем в Ленинградской филармонии. «...Он совершенно по-своему осмыслил древние пласты армянской культуры. Органично «вжившись» в выстроенные Тертеряном концепции, пласты эти обрели общечеловеческую, интернациональную значимость» (Гия Канчели).

«Авет Тертерян мне навсегда запомнился таким, каким я его видел в Берлине незадолго до смерти. Он сидел тогда в состоянии какой-то неопределенности, как бы повисший без продолжения аутфакта. Было что-то особенное в его облике – мне в те минуты не хватало в его лице «коды». А через неделю я узнал о случившемся. Он ушел от нас слишком рано и слишком быстро. С тех пор меня не покидает двойственное чувство: с одной стороны, я так никогда и не узнаю, что же в тот момент зрело в его душе; с другой стороны – ясное ощущение, что теперь встала на свое место недостающая тогда кода. И кода эта – гигантский и, я бы сказал, монументальный труд всей его жизни, про который можно уверенно сказать: свершилось» (Арво Пярт).

«МО»

<https://muzobozrenie.ru/sedmaya-simfoniya-aveta-terteryanav-moskovskoy-filarmonii-21-marta-2022/>

ԼՈՒՍԻՆԵ ԶԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ



Մրցույթի հանձնախմբի կազմը. Առնոլդ Քոչարյան, Օլգա Գաբայան, Սուսաննա Դավթյան, Քրիստինե Սահակյան, Կարինե Սկրտչյան, կազմակերպիչ՝ Կարեն Զոհրաբյան



Սուսաննա Դավթյան, Օլգա Գաբայան, Կարինե Սկրտչյան, Քրիստինե Սահակյան, Առնոլդ Քոչարյան, Կարեն Զոհրաբյան



Առաջին մրցանակ և ոսկե մեդալ՝ Դովհաննես Կարապետյանը և Տենոր մշակութային ԴՀ նախագահ Կարեն Զոհրաբյանը

Նյութը լույս էր տեսել «Երաժիշտ» ամսաթերթի # 12 (192) 2021 թ. դեկտեմբերի համարում: Սակայն այն հարկ համարեցինք վերատպել փոքրիկ շտկումներով:

2021 թվականն առատ էր մշակութային իրադարձություններով: Հուլիսի 21-23 Արաբկիրի հայրողաց տանը տեղի ունեցավ Լուսինե Զաքարյանի անվան երգիչների առաջին հանրապետական մրցույթը:

Մրցույթն իրականացվեց «Տենոր» մշակութային հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ և բացառապես Կարեն Զոհրաբյանի աջակցությամբ ու նյութական միջոցներով: Արաբկիրի հայրողաց տան դահլիճը տրամադրվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից:

Հաշվի առնելով համավարակի ազդեցությունն այսօրվա կյանքի վրա, մրցույթը մեկնարկվեց որպես հանրապետական: Մրցույթի նպատակն էր ոչ միայն բացահայտել դասական երգարվեստի սկսնակ կատարողներին, այլև հարգանքի տուրք մատուցել հայ հոգևոր երգարվեստի նվիրյալ՝ Լուսինե Զաքարյանի հիշատակին: Նշենք, որ կազմակերպիչներն ակնկալում են դուրս գալ միջազգային հարթակ:

Մրցույթին մասնակցում էին երեք տարիքային խումբ: Առաջին տարիքային խմբում մասնակցում էին 8-13, երկրորդ խմբում՝ 14-17, իսկ երրորդ խմբում՝ 18-35 տարեկան երգիչներ: Մրցութային ծրագիրը պարտադիր ներառում էր մեկ ստեղծագործություն Կոմիտասի երգերից, մեկ արիա, մեկ ստեղծագործություն Լուսինե Զաքարյանի երգացանկից և մեկը՝ XX դարի կոմպոզիտորների գործերից:

Հանձնախմբի կազմում ընդգրկված էին՝ ՀՀ ժողովրդական արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր Օլգա Գաբայանը, «Լուսինե Զաքարյանի և Խորեն Պալյանի տուն-թանգարան»-ի տնօրեն Սուսաննա Դավթյանը, ԵՊԿ պրոֆեսոր Կարինե Սկրտչյանը, դոցենտ, օպերային մեներգչուհի Քրիստինե Սահակյանը, ՀՀ վաստակավոր արտիստ, դոցենտ Առնոլդ Քոչարյանը:

«Ա» խմբում (18-35 տարեկան) Առաջին մրցանակը և ոսկե մեդալը նվաճեց ԵՊԿ ուսանող՝ Դովհաննես Կարապետյանը (դասախոս՝ Կարինե Սկրտչյան), երկրորդ մրցանակն ստացան՝ Մերի Մարտիրոսյանը (դասախոս՝ Հասմիկ Հա-

ցագործյան), Օֆելիա Համբարձումյանը, (դասախոս՝ պրոֆեսոր Օլգա Գաբայան) և Լևոն Ալմասյանը, (դասախոս՝ Առնոլդ Քոչարյան), երրորդը՝ Մարիամ Հովհաննիսյանը, Նելլի Սաղաթելյանը և Արամ խաչատուրյանը:

«Բ» խմբում (14-17 տարեկան) Առաջին մրցանակին արժանացավ Արտյոմ Ասմանգուլյանը (դասախոս՝ Կարինե Սկրտչյան), երկրորդին՝ Հայկ Փողոտյանը (դասախոս՝ Լիանա Վարդանյան), երրորդին՝ Անի Ղազարյանը և Լիլիթ Գրիգորյանը:

Լուսինե Զաքարյանի անվան երգիչների առաջին հանրապետական մրցույթի գալա համերգը տեղի ունեցավ հուլիսի 23-ին, Արաբկիրի հայրողաց տանը:

Կազմակերպիչները նպատակ ունեն ընդլայնել մրցույթի շրջանակները, ընդգրկելով մասնակիցներ նաև արտերկրներից:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿՐԻՍԿՈՍՅԱՆ
Երաժշտագետ

Արմեն Բուդաղյանի «Եվգենյա Խոսրովյան» մենագրությունը

2019 թ. լույս է տեսել երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Բուդաղյանի «Եվգենյա Խոսրովյան» (*Будагян А. «Евгения Хосровян»*) գիրքը: Մենագրությունը նվիրված է արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, դաշնակահար Եվգենյա Խոսրովյանին: Այն լույս է տեսել «Կռունկ» տպագրատանը և բաղկացած է 4 բաժնից, որոնցից յուրաքանչյուրը ներառում է ենթաբաժիններ և դրանց բովանդակությունն էլ արտացոլված են վերնագրերում: Օրինակ՝ Առաջին բաժին՝ Արվեստագետի ծնավորումը:

Առաջին ենթաբաժին՝ «Թբիլիսի: Մանկության շրջան: Ծնողներ»:

Երկրորդ ենթաբաժին՝ «Սանկտ-Պետերբուրգում ուսանելու շրջան»:

Երրորդ ենթաբաժին՝ «Կրկին Թբիլիսիում: Աշխատանք Հայ արվեստի տանը և Թբիլիսիի Երկրորդ կոնսերվատորիայում» և այլն:

Առաջին երկու բաժինները կենսագրական են՝ ներկայացվում է Խոսրովյանի իբրև արվեստագետի կայացումը, իր շփումները ժամանակի նշանավոր գործիչների հետ, նրա աշխատանքային գործունեությունը՝ կարող ենք թվարկել իբրև մանկավարժ և կատարող-մենակատար, կոնցերտ-մայստեր և մեթոդիստ:

Օրինակ Խոսրովյանի դասարանում են ուսանել Առնո Բաբաջանյանը, Ղասարոս Սարյանը, Գևորգ Գյուրկանյանը, Շուշանիկ Ափոյանը, Ամալյա Բայբությանը և այլք: Նա բազմիցս հանդես է եկել որպես մենակատար, աշխատել է Հայաստանի ռադիոյում, նվագակցել է երգչուհի Հայկանուշ Դանիելյանին, ջութակահարներ Ավետ Գաբրիելյանին, Դմիտրի Լեզկերին, թավջութակահարներ՝ Արտեմի Ավագյանին, Միքայել Մալունցյանին և այլոց: Անգնահատելի է նաև Խոսրովյան-մեթոդիստի դերը՝ նա կազմել է հայ մանկավարժության մեջ առաջին «Դաշնամուրային ձեռնարկը», որն այսօր էլ կիրառելի է:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում գրքի Երրորդ «Գրական էջեր» բաժինը: Այստեղ զետեղված են գերմանացի դաշնակահար և մանկավարժ Էդոն Պետրիի, Լեոնիդ Գրի (այժմ Սանկտ-Պետերբուրգ) կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահար Սամարի Սավչինսկու գիտամեթոդական

արժեքավոր զեկույցները՝ պահպանված Խոսրովյանի գրառմամբ: Ինչպես նաև մեծ գիտական հետաքրքրություն ներկայացնող՝ Առնո Բաբաջանյանի ուսման տարիներին ժամանակագրությունը և սաների հուշերը Խոսրովյանի մասին: Վերջին ենթաբաժնում լուսաբանվում է կոնսերվատորիայի հինգ դասախոսի հեռացման հարցը, որոնց թվում էր նաև Խոսրովյանը:

Գրքի Զորրորդ եզրափակիչ բաժինն իրենից ներկայացնում է հավելվածներ: Առաջինը Խոսրովյանի կյանքի և գործունեության ժամանակագրությունն է, երկրորդը՝ նրա համերգացանկը, երրորդում ներկայացված են նրա սաների անուններն ըստ դասարանական համերգների ծրագրերի տվյալների և վերջին հավելվածում տրված են մենագրություններ, գրքեր և հոդվածներ՝ Եվգենյա Խոսրովյանի անվան հետ կապված և նրա մասին:

Եվգենյա Խոսրովյանն ու իր ժամանակակիցները մեծ ներդրում ունեցան Երևանի մշակութային կյանքի ծնավորման, երաժշտական կրթական համակարգի հիմնման և զարգացման գործում: Այս կապակցությամբ մեջբերենք մենագրությունից մի հատված. *«Можно утверждать, что Хосровян и музыканты ее окружения в полной мере осознали свою миссию первопроходцев в области формирования в Армении новой культурной жизни и воспитания нового поколения музыкантов, способных подхватить и развить дело своих учителей».*

Նշենք, որ մենագրությունում զետեղված են լուսանկարներ, ազդեր, դիմանկարներ, նոտաներ, ինչպես նաև կոնսերվատորիայի դասախոսների հեռացման հրամանը:

Վերջում կուզենայինք անդրադառնալ Երրորդ գլխի երկրորդ ենթաբաժնում զետեղված աղյուսակին, որը ներկայացնում է Ա. Բաբաջանյանի գործունեության ժամանակագրությունը: Աղյուսակում մենագրության հեղինակը զուգահեռաբար ներկայացնում է Ա. Բաբաջանյանին, որպես և՛ դաշնակահար, և՛ կոմպոզիտոր: Հարկ է նշել նմանատիպ աշխատանքների կարևորությունը երաժշտության ուսումնասիրությունների ոլորտում: Սակայն սա առաջինն է կապ-



Արմեն Բուդաղյան

ված Առնո Բաբաջանյանի անվան հետ: Եվ հավելենք, որ տվյալ աղյուսակը ներառում է կոմպոզիտորի միայն Երևանում և Մոսկվայում ուսանելու տարիները՝ մինչև 1956 թվականը: Այսպիսով, երիտասարդ երաժշտագետներին հնարավորություն է ընձեռնվում շարունակել Ա. Բուդաղյանի աշխատանքը և իրենց լուսման ներդրելու հայրենի երաժշտագիտության զարգացման գործում:

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱՐԱՄԱՆՅԱՆ
Երևանի Ա.Բաբաջանյանի անվ. պետական երաժշտամանկավարժական քոլեջի երաժշտության տեսության բաժնի 1-ին կուրս

ՄԱՐԳԱՐԻՏ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ՎՄՅԱԿԻՆ

Զրուցակից շատ կա, բայց մասնագիտական հոգեկից գրույց քչերի հետ է լինում։ Այդ քչերի հետ է, որ դեռ գրուցում ես, երբ նրանք այլևս չկան։ Երկու պայծառ անհատների և նվիրյալ բանագետների հետ զրույցս ամենօրյա է։ Արամ Ղանալանյանը և Մարգարիտ Բրուտյանն ինձ պաշտոնապես կարգված ղեկավար չեն եղել, սերնդակիցը չէի, և ինձ դարձրեցին իրենց զրուցակիցը։ Սա մեծի մեծությունն է։ Անհատի կենսագրականում դիտվում է բախտի շռայլություն, նաև այդպես է։ Տարբեր սերունդների շփման դեպքում է, որ գիտության և մշակույթի մեջ նույնպես գործում է ժառանգություն-ժառանգորդ ներքին կապը, և անհատի ինքնահաստատման ընթացքը դառնում է մասնագիտական ինքնահսկման ընթացք։ Դենց այդ մեկի կարիքն ունես՝ գրավոր և բանավոր, գրույց և գիտություն։ ասես հենց այդ մեկի համար ես մտածում, խոսում և գրում։ Երկու մեծերն առ այսօր հսկում են միտքս, ասելիք-գրելիքս։ Այդպես տևաբար նրանք էին գրուցում Մանուկ Աբեղյանի և Քրիստափոր Քուշ-նարյանի հետ։

Անհնար է մտածել, որ նրանք իրենց մեծ էին զգում, առավել ևս՝ համարում։ Հայագիտության և երաժշտագիտության երկու հսկա մեծ էին տեսել։ Նախորդ-հաջորդ շղթայի մեջ մեր կողքին ապրող այդ երկու մեծն իրենց զգում էին բոլոր նախորդների հիմնած մտքի և գործի շարունակող, որովհետև որքան շատ էր ասված և արված, նույնքան, զուցե և ավելի շատ, ասելիք և անելիք կար։ Փաստացի շարունակող էին, և իրենց այդ առաքելության մասին էլ խոսելու կարիքը չուներին։

Այս երկու մեծի՝ Արամ Ղանալանյանի և Մարգարիտ Բրուտյանի դեպքում էլ մարդը և մասնագետն այնքան ծույլ էին, որ միևնույն հիմա էլ կարող էի չիմանալ՝ ո՞րն է առաջնայինը? մասնագետ՞ուր, թե՞ մարդը։ Ով մեծի հետ շփվելու բախտն է ունեցել, փաստված ճշմարտության պես գիտե, որ մեծի դեպքում մարդը և մասնագետը ներդաշնակ են, ամբողջ են, էություն են և ինքնություն են։ Մեծն դրանից է, որ մեծերը բացառիկ անհատականություն են։ Այս հարցի բանալին էլ նրանց ձեռքում էր. իրենց նախորդող մեծերին էին ծանաչել և՛ մարդ, և՛ մասնագետ։ Նրանք այդ բանալին էլ ինձ տվեցին։ Եվ եթե պատմեմ, այդ բանալիով պիտի պատմեմ։

Խորապես շնորհակալ եմ իմ շատ սիրելի Գոհար Շագոյանին, որ Մարգարիտ Բրուտյանի ծննդյան 90-ամյակի առիթով մի շատ ընդարձակ հոդված հրատարակեց «Երաժշտական Հայաստան» ամսագրում։ Ուզում եմ հիշեցնել այդ հոդվածի վերնագրի երկրորդ մասը՝ «Տևական գրույց Մարգարիտ Բրուտյանի հետ»։ Այդ, Մարգարիտ Բրուտյանի հետ կարելի էր տևական զրուցել, քանի որ գրույցը միայն մասնագիտական էր լինում, որովհետև խնդիր էինք և՛ առաջադրում, և՛ լուծում։ Իսկ որպես բանագիտություն, ժողովրդի բանավոր ավանդական ժառանգություն, խնդիրներն այդքան հեշտ լուծելի չէին և չեն։ Իսկ վերնագրի առաջին մասի մասին Մարգո Արամովնան ասաց. «Ի՞նչ է նշանակում «Ինքնաարժեք և ինքնաարգելք», ի՞նչ ի նկատի ունես»։ Ես ասացի. «Նկատի ունեմ, որ հայ ժողովուրդն ինքն իր արժեքը երբեք չճանաչեց, մանավանդ անկախության, ազատության և պետականության մակարդակում»։ Միայն 2000 տարի է՝ պահում է Տիգրան Մեծի անունը, մանավանդ՝ նրա հետ կապված «ծովից ծով Հայաստան» ասույթով»։ Եվ պատմեցի իմ գրառումներից մի բան, որը շատ հուզեց Մարգո Արամովնային։ Ստեփանավանի գյուղերից մեկում մի հայրենադարձ ծերունու ծայնագրեցի։ Նա

հանկարծակի ասաց. «Աս ոտքս կտեսնի՞ս»։ Մի ոտքը զցեց մյուս ոտքի վրա, ցույց տվեց ոտքի թաթը և ասաց. «Նայի՛ այս ոտքիս, Տիգրան Մեծը ըսավ. «Ծովին ջուրերն ալ պիտի հայերեն խոսին»։ Այս ոտքովս շատ երկիրներ ման եկած եմ, հատկապես Լիբանան, որ Կարմիր ծովի այս ափին է և Եգիպտոս, որ Կարմիր ծովի մյուս ափին է։ Երկու երկրի մեջ էլ շատ հայեր կան և հայերեն կխոսին։ Արդյոք ա՛յս է, որ ծովի ջուրերն ալ պիտի հայերեն խոսին»։ Մարգո Արամովնան շատ հուզվեց այս պատմածի վրա։ Սա նաև ապացույց է, որ ամեն բան և բոլոր ժամանակները պահում է ժողովուրդը։ Փաստորեն երկուսս էլ երջանիկ էինք, որ բանագետ ենք։ Ես որերորդ անգամ մի հարց բարձրացրի, թե գյուղերում ինչու չկան երաժշտական դպրոցներ, որի պատճառով էլ ես, որ գյուղում եմ ծնվել ու մեծացել, չունեմ երաժշտական կրթություն։ Մարգո Արամովնան ասաց. «Մշակույթի նախարարությունը, որ այս խնդիրը հասկանա, լա՞վ է»։ Բացարձակ անաչառ էր, և ես ասացի. «Նաև ձեր օրինակով ապացուցեմ. դուք ձեր արժեքի համեմատ գնահատվեցի՞ք։ Ոչ, իհարկե»։ Մարգո Արամովնան ասաց. «Ես ինչ արել եմ, այդ բանավոր մշակույթի համար եմ արել և ինձ համար ոչինչ չեմ արել։ Այնպես, որ բոլորովին նեղացած չեմ»։ Բայց հիշում եմ, մի անգամ ասաց. «Արուսյակ, ես էլ ի՞նչ պիտի անեի, որ ինձ Արվեստի վաստակավոր գործչի կոչում տային, որ չտվեցին և նաև խափանեցին իմ դոկտորականի պաշտպանությունը։ Նաև գիտեմ ովքեր խափանեցին»։ Մի օր էլ ասաց. «Արուսյակ ջան, երևի միայն քեզ չեմ պատմել։ Միջանցքում մեր դասախոսներից մեկն ինձ ասաց.

- Марго Арамовна, мне Вас очень жаль.
-Это почему же?.
-Что Вы занимаетесь фольклором.
-Это еще вопрос, кто кого должен жалеть.

Ես հիշեցի մեր անկախության հռչակման օրերը, երբ շատ մտավորականներ խոսում էին ռուսական դպրոցների շառույթյան դեմ։ Իսկ Կոնսերվատորիան մի մտավորական բերեց՝ որպես հայոց օտարաճուրջության նմուշ-օրինակ։ Այսինքն՝ ծնողներն իրենց հինգ-վեց տարեկան երեխային տանում են երաժշտական դպրոց, հետո էլ երաժշտական ուսումնարան, հետո էլ՝ Կոնսերվատորիա, և այս սերունդը դառնում է բացարձակ օտարված իր լեզվից, մշակույթից, պատմությունից։ Եվ այդպիսի մի բարձրագույն հաստատությունում, որ կրում էր Կոմիտասի անունը, այդ մտավորականը 1969 թվին բացեց Հայ երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոն, գրեց դասագիրք և հնարավորինս պահպանեց ու փոխանցեց երիտասարդ սերնդին կոմիտասյան ավանդույթները։ Սրանք ապշելու փաստեր են։

Դաժան լինելու աստիճան ճշմարտախոս էր և անմահանք Մարգո Բրուտյանը։ Երբ կաթվածից հետո սայլակի վրա էր, մի օր այդպես իր ուսանողները բերեցին և սայլակով բարձրացրին բեմ։ Դահլիճում բոլորը շատ հուզված էին և ծափահարեցին։ Ես էլա բեմ խոսք ասելու, Մարգո Արամովնան կանչեց իր մոտ և ակամջիս ասաց. «Դու ինձանից խոռով չե՞ս»։ Ես ասացի. «Մենք միայն մասնագիտական գրույց ենք ունեցել և մենք չէինք կարող խռովել իրարից»։ Ես բեմից պատմեցի մի դեպք. Պոլիտեխնիկ ինստիտուտը ամեն տարի կազմակերպում էր ազգագրական երգի ու պարի փառատոն։ Ներկա Հայաստանի տարբեր շրջանների



գյուղերից, նաև Ռուսաստանից և Արցախից գալիս և մասնակցում էին փառատոնին։ Խմբերի ելույթները գնահատող հանձնախմբի նախագահը Մարգարիտ Բրուտյանն էր։ Մարգարիտ Բրուտյանը հանձնախմբի նիստերին մասնակից էր դարձնում նաև խմբերի ղեկավարներին, որ լսեմ բոլոր դիտողությունները և ոչ մեկից չնեղանան։ Թալինի շրջանի գյուղերից մեկի երգի-պարի ղեկավարը նեղացավ և ասաց. «Եկե՛ք, իմ խումբը մեր գյուղում տեսե՛ք»։ Մարգո Արամովնայի հետ զնացինք այդ գյուղ։ Գյուղի ակումբում դիտեցինք այդ խմբի ելույթը, հետո խմբի ղեկավարը մեզ հրավիրեց իրենց տուն, ճաշի սեղան էր գցել։ Հանձնախմբի հաջորդ նիստին Մարգո Բրուտյանը այդ խմբի ղեկավարին ասաց. «Ձեր խումբը չի ելնի եզրափակիչ համերգ»։ Այս ղեկավարը նեղացավ, դուռը շրխկացրեց-զնաց։ Մարգարիտ Բրուտյանն ինձ ասաց. «Եթե հացի սեղան էր գցել, մեզ կաշառե՞լ էր»։ Ես ասացի. «Աստված իր հետ, թող զա մեզ հետ երգա-հավաք գործուղումներին և կտեսնի որ, որ տունը մտնում ենք, սեղանը գցած է»։ Մարգո Արամովնան ասաց. «Կտանենք հետներս»։ Եվ այդ խումբն իրոք եզրափակիչ համերգին չմասնակցեց և չնկարահանվեց։

Մի ասացվածք կա, որ շատ եմ սիրում և կարծես չափա-նիշ լինի. «Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ հացի մի ցատի»։ Մի օր ես Մարգո Արամովնային ասացի. «Կարծես այդ ասացվածքը ձեր համար եմ հորինել, և դուք այն վերցրել եք որպես ուղեմիջ։ Ես սիրով հետևում էի, թե ինչպես դուք ոչ մի քայլ չեք շեղվում ձեր այդ ուղեմիջից»։ Փաթաթվեց, ասաց. «Սատանա», - և ավելացրեց. «որ ասում եմ՝ երաժշտագետ-բանագետը պետք է նաև ընդհանուր բանագետ լինի, որ իմանա՝ ժողովուրդն ինչ է ասել-խոսել և հետո երգել-պարել»։

Խոսքս ավարտեմ մի առածով. «Հացը հացթուխին տո՛ւր, երկու հաց էլ ավել տո՛ւր»։ Մարգարիտ Բրուտյանը հայոց երաժշտական ավանդական ժառանգության հացթուխն էր, բայց երբեք չմտածեց, որ իր թխածից իրեն բաժին վերցնի և, առավել ևս, երկու հաց ավել ուզի։ Ինքը միայն թխեց և բաժանեց։

ԱՐՈՒՄՅԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ
Ազգագրագետ, բանագետ

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ՌԱԻՍԱԿ ՄԿՐՏՅԱՆ

4 գայանի մասին։ Ավարտելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը, նա մոր կամքին հակառակ, համառորեն, ընտրեց անվանի ծնողի ուղին։ Նա ընդունվեց Մոսկվայի Գնեսինների հայտնի երաժշտական ակադեմիայի ջազային երգեցողության բաժնի 2-րդ կուրս։ Նրա յուրատեսակ, նրբերանգ, թավ ու հնչելի ձայնը, բարձր երաժշտական ճաշակը և աշխատասիրությունը, նպաստեցին նրա համագործակցությանն այնպիսի ջազային երաժիշտների հետ, ինչպիսիք են Օլեգ Լուկաստրենը, Դանիլ Կրամերը, «Լիզա Բլյուզ» բեմը։ Այսօր ՌԴ վաստակավոր արտիստ Արմինե Սարգսյանի անունը ծանոթ է և գնահատված մոսկովյան բարձրաճաշակ և խստապահանջ երաժշտական հասարակության կողմից։ Հայ իանդիսատեսը հնարավորություն ունեցավ առաջին անգամ լսելու Արմինե Սարգսյանին, հինգ տարի առաջ կայացած ՀՀ ժողովրդական արտիստուհի Ռաիսա Մկրտչյանի հորեյականական երեկոյի ժամանակ։ Երիտասարդ երգչուհու փայլուն ելույթը, թե՛ Դանիլ Կրամերի, թե՛ մայրիկի Ռաիսա Մկրտչյանի հետ հիացրեց ունկնդրին։ Շատերի համար այդ ելույթը հայտնություն էր, իսկ ոմանք էլ հիշեցին 1990-ականներին նկարահանված տեսահոլովակը, որտեղ Ա.Աղաբաբյանի «Կապույտ երկինք գարնան» զուգերգով հանդես էին եկել այն ժամանակ դեռ ՀՀ վաստակավոր արտիստուհի՝ Ռաիսա Մկրտչյանը և նրա դուստրը՝ կոնսերվատորիայի ուսանողուհի Արմինե Սարգսյանը։



«Կյանքում ամենամեծ երջանկությունն է, երբ զբաղվում ես այն գործով, որի համար կոչված ես, որը դառնում է քո կյանքի գործը, որում կարող ես մաքսիմալ ինքնահաստատվել»։ - Ռաիսա Մկրտչյան։

Ռաիսա Մկրտչյանն իր ողջ կյանքի ընթացքում եղել է հավատարիմ։ Հավատարիմ իր գործին, իր խղճին, իր մարդկային բարեպաշտ տեսակին։ Ծանոթությունը և շփումը համաշխարհային հռչակ ունեցող մարդկանց հետ, համարաճանաչ և պահանջված լինելը երբեք չեն փոխել երգչուհու կերպարը։ Նա մշտապես դրսևորել է իրեն չափազանց համեստ և զուսպ՝ զերծ մնալով «աստղային հիվանդությունից», երբեք չի ճնշել իր «ես»-ով, լուռ շրջանցել դժվարություններն ու անախորժությունները։ Ռաիսա Մկրտչյանը կարողանում է ընդամուր շփման եզրեր գտնել բոլորի հետ, մանկան պես ուրախանալ մանրուքից, հետաքրքիր գրույցներ վարել՝ ապշեցնելով իր պայծառ հիշողությամբ, հմայել իր խոսակցական երգեցիկ ինտոնացիայով և գերել՝ Սևանի կապտա-կանաչ խորությունն արտացոլող, բարի ու խաղաղ աչքերով։

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ԱՐԱՋԱՆՅԱՆ
Երաժշտագետ
Ա. Բաբաջանյանի անվ. պետ.
երաժշտամանկավարժական
քոլեջի ուսումնական գծով փոխտնօրեն

“Навстречу весне”: концерт Анны Дьячковской в Санкт-Петербурге

1 В Санкт–Петербурге в музее–усадьбе Державина (того самого, который, “в гроб сходя”, благословил лицеиста Пушкина), состоялся необычный концерт: солистка якутской оперы исполняла песни армянских композиторов.

Среди авторов – Александр Спендиаров, Комитас (чье имя носит Ереванская консерватория) и наша современница Софья Микаэлян, которую четыре года назад так вдохновило пение заслуженной артистки России и Якутии Анны Дьячковской, что она сама предложила ей сотрудничество.

В 2018 году Анна Дьячковская и Аиза Решетникова также выступали в северной столице в Шереметьевском дворце, где ныне находится Музей музыки, и член Союза композиторов Санкт–Петербурга Софья Микаэлян, пришедшая туда на выставку, была счастлива, что попала на их концерт. Анна Дьячковская и Аиза Решетникова до пандемии активно гастролировали не только по России – выступали в Германии, Австрии, Японии, Корее, Киргизии, Казахстане. “В год выезжали по несколько раз”, – рассказывает певица.

Их тепло принимали везде: в программе, которую подготовила Аиза Решетникова, были произведения Сергея Рахманинова, Петра Чайковского и якутских композиторов Германа Комракова, Дениса Данилова. И независимо от того, в какой стране они выступали, когда звучал “Тихий вечер” Комракова, глаза у слушателей увлажнялись.

– Это была идея А. Решетниковой, чтобы наряду с мировой классикой звучала и якутская классика.

Побывав на одном из таких концертов, композитор и пианистка Софья Микаэлян, доцент Ереванской консерватории и член Союза композиторов Республики Армения, принесла Анне Дьячковской ноты и тексты армянских песен – и тех, что веками не сходят с уст, и созданных ею. Заслуженная артистка России и Якутии согласилась сразу: “Музыка должна звучать, потому что



Софья Микаэлян и Анна Дьячковская

она объединяет народы”.

“Ай вард” (“К розе”), “Крунк” (“Журавль”), “Чинар ес” (“Ты чинар”) – разучить эти и другие песни оказалось не так–то просто: на разных диалектах армянского слова произносятся по–разному, и по возвращении в Якутск Анна Васильевна, уточняя у местных носителей языка особенности произношения, стала свидетелем весьма горячих дискуссий, где каждая сторона с присущим ей темпераментом отстаивала правильность своего варианта. В эпицентре этих баталий оставалось только гадать, как же все–таки произносится тот или иной звук – например, ближе к “к” или к “х”?

Кроме этого, были и уроки онлайн, которые давала Микаэлян, да и в город на Неве певица специально при–

ехала за пять дней до концерта, чтобы все окончательно отточить и отрепетировать. И в ветреный мартовский день в усадьбе Державина звучали Рахманинов и Чайковский, Спендиаров и Комитас, Комраков и Данилов. Исполнены были и произведения Софьи Микаэлян.

– Она поразила меня еще и тем, как очень четко все организовала. У нас чаще как бывает: или творческий человек, или организатор. Здесь же я увидела пример того, что талантливый человек талантлив во всем. А благодаря предыдущей многолетней работе с Аизой Решетниковой нас хорошо знают, и это тоже способствовало, ведь в такие залы так просто не приглашают. Если певец только начинает, обязательно прослушивают его записи перед тем, как принять решение, – говорит Анна Васильевна.

Публика приняла концерт очень тепло, о чем можно судить по отзывам в интернете.

Осталось только добавить, что концерт “Навстречу весне” прошел в рамках проекта “Российско–армянский творческий мост”, который явно будет продолжен: звукорежиссер и музыковед Валентина Оганесян, которая вела концерт, увезла в Ереван ноты песни Германа Комракова “Тихий вечер”.

Фото: Семен Дьячковский
КЮННЭЙ ЕРЕМЕЕВА

Անուշավան Տեր-Ղևոնդյանի ստեղծագործությունը

Անուշավան Գրիգորի Տեր-Ղևոնդյանը սովետահայ կոմպոզիտորների ավագ սերնդի խոշոր ներկայացուցիչներից մեկն է: Նրա ստեղծագործությունը, ինչպես և բազմակողմանի երաժշտական–հասարակական գործունեությունը մեծ դեր են խաղացել հայկական պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման ընթացքում, սկսած դրա սկզբնական ծավալման շրջանից մինչև սովետական հայկական երաժշտության այսօրվա ծաղկումը:

Տեր-Ղևոնդյանը երիտասարդ տարիքից դաստիարակվել է Պետերբուրգում և երաժշտական վարպետությունը ձեռք է բերել ռուս նշանավոր կոմպոզիտորներ Գլազունովի, Լյադովի, Շտեյնբերգի ու մյուսների շրջանակում: Իր ստեղծագործությամբ նա հենց սկզբից համդեմ է եկել որպես ռուսական ակադեմիական երաժշտության և հատկապես Ռիմսկի–Կորսակովի շկոլայի ռեալիստական տրադիցիաների ջերմ պաշտպան ու հետևորդ:

Հիմք վերցնելով հայկական ժողովրդական երգը՝ Տեր-Ղևոնդյանն ստեղծել է բազմազան երաժշտական գործեր, որոնք աչքի են ընկնում իրենց բովանդակալիությամբ, երաժշտական լեզվի պարզությամբ և մատչելիությամբ: Այդ ստեղծագործությունները, հատկապես սիմֆոնիկ և օպերային երաժշտության ասպարեզում, խոշոր չափով նպաստել են հայկական ազգային երաժշտական ոճի զարգացմանն ու հարստացմանը:

Ստեղծագործության հետ զուգահեռ տանելով երկարամյա մանկավարժական աշխատանք՝ Տեր-Ղևոնդյանը նշանակալի գործ է կատարել նաև երաժշտական կրթության զարգացման ասպարեզում, ինչպես Սովետական Հայաստանի, այնպես էլ եղբայրական Վրաստանում ու Ադրբեջանում: Անուշավան Տեր-Ղևոնդյանը Երևանի Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիայի ավագագույն պրոֆեսորներից մեկն էր:

Անուշավան Տեր-Ղևոնդյանի ստեղծագործությունն իր մեջ ընդգրկում է երաժշտական տարբեր ժանրեր: Դեռևս նախառևոլուցիկ տարիներից սկսած Տեր-Ղևոնդյանն աշխատել է հայկական ժողովրդական երգերը հավաքելու և գրի առնելու ուղղությամբ: Ուստի նրա ստեղծագործության մեջ որոշակի տեղ են գրավում իր իսկ ծայնագրած ժողովրդական երգերի մշակումները: Դրանցից հայտնի են «Ճախարակ», «Կայնել եմ, գալ չեմ կարող», «Առ սիրուհիս», «Կաքավի պես», «Գնա արի, ման արի» մեներգերը, «Կողբա յայլի» խմբերգը և այլն: Ինքնուրույն ռոմանսային և խմբական երաժշտության մեջ Տեր-Ղևոնդյանն ստեղծել է Վ. Տերյանի խոսքերով գրված «Աշնանայինը», «Այնպես նազիկը»,

Ա. Իսահակյանի խոսքերով գրված «Ուռենի» խմբերգը և այլ երգեր, որոնք շարունակ պահպանում են իրենց թարմությունն ու արժեքը: Տեր-Ղևոնդյանի վոկալ ստեղծագործությունների մեջ կան նաև մի շարք գեղեցիկ մանկական երգեր: Խոշոր նշանակություն ունի նրա սիմֆոնիկ մտածողությունը:

Ա. Սպենդիարովի հետ Ա. Տեր-Ղևոնդյանը հանդիսանում է հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրներից ու զարգացնողներից մեկը: Սիմֆոնիկ օրկեստրի համար գրված նրա «Շիրակի տյուրուները» Հ. Թումանյանի պոեմի հիման վրա գրված «Ախ, Թամար»-ը հայկական ոճով սիմֆոնիկ երաժշտության առաջին ստեղծագործություններից են: Մեղեդիների գեղեցկությամբ, նկարագրողական բնույթի գեղեցիկ գործիքավորումով, ընդհանուր բովանդակությամբ ու հուզականությամբ այդ ստեղծագործություններն ունենդիրների շրջանում միշտ մեծ հաջողություն են գտնում:

Ա. Տեր-Ղևոնդյանի ստեղծագործությունն առանձնապես ընդարձակվել է ինտենսիվ է դարձել սովետական ժամանակաշրջանում: Այդ տարիներին նրա երգային ստեղծագործությունը հարստացել է բազմաթիվ նոր ռոմանսներով, մեներգերով: Մի շարք այլ երգեր, որոնց թվում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին գրված «Կովկասյան բաջեր» երգն արժանացել են մրցանակի և ժողովրդականություն են ձեռք բերել: Մասսայական բնույթի ստեղծագործությունների մեջ հանրամատչելի են նաև Ա. Տեր-Ղևոնդյանի քայլերգերը՝ գրված փողային նվագախմբի համար:

Սովետական տարիներին Ա. Տեր-Ղևոնդյանի ստեղծագործությունն առանձնապես զարգացել է մոնումենտալ ժանրերի ուղղությամբ: Այս տարիներին է ավարտվել նրա «Սեդա» օպերան, համդեմ են եկել պատանիների համար գրված «Արևի ցուլերում» օպերան, «Հոր հարսնացուն» և «Անահիտ» բալետները և զանազան գործիքների ու սիմֆոնիկ նվագախմբի համար գրված մի շարք այլ գործեր:

«Կայնել եմ, գալ չեմ կարող» երգը Տեր-Ղևոնդյանի կատարած առաջին մշակումներից է: Այդ մշակման մեջ անկեղծ լիրիզմով թափանցված ժողովրդական մեղեդին սիմֆոնիկ օրկեստրի նվագակցությամբ ստացվել է ավելի արտահայտիչ և բովանդակալի: Օրկեստրային փոքր նախաբանն ու վերջաբանը երգն ամբողջացրել են, դարձրել են այն ընդարձակ ստեղծագործություն:

Երգեցիկ խմբի համար կատարված մշակումներում Ա. Տեր-Ղևոնդյանը շարունակում և զարգացնում է հայկական խմբերգային ստեղծագործության տրադիցիաները: Այդ տեսակետից ցայտուն օրինակ է հանդիսանում նրա «Կողբա

յայլի» խմբական ուրախ պարերգը:

Ա. Տեր-Ղևոնդյանի «Անահիտ» բալետը գրված է Ղ. Աղայանի համանուն պատմվածքի հիման վրա: Այդ բալետի իդեան աշխատանքի ու հերոսության գովերգությունն է: Բալետի երաժշտությունը հարուստ է ժողովրդական ցայտուն կոլորիտ ունեցող, բազմազան բնույթի մի շարք պարերով:

Արժագանքելով ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի 1948 թվի փետրվարի 10-ի պատմական որոշմանը, կոմպոզիտոր Ա. Տեր-Ղևոնդյանը գրել է «Արևի ցուլերում» մանկական օպերան: Այս օպերայի նյութը մեր պատանեկության երջանիկ կյանքն է և սովետական մարդասիրությունը, որն արտահայտվում է զաղության երկրներում շահագործման ծանր լծի տակ տառապող երեխաների նկատմամբ սովետական պիոներների հանդես բերած ջերմ սիրո, օգնության և հոգատարության մեջ:



13/06/1952 թ., Երևան

«Ռոբերտ Արայան» գրքից

Ռոբերտ Արայան/Յրատարակության պատրաստեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Լուսինե Սահակյանը. - Եր.: Հեղ. հրատ., 2021. - 352 էջ: 158-160 էջեր:

Խմբագրական.

Հոդվածում պահպանել ենք Ռոբերտ Արայանի ժամանակի տեղմինաբանությունը, որով նա գրել է իր հոդվածներն ու աշխատությունները

Ծովինար Չալոյանի դասախոսությունները

«Պատմական Հայաստանի գեղագիտության պատմությունը»

Սկիզբը #12 (192) դեկտեմբեր 2021 համարում

Հայ մշակույթի և գեղագիտական մտքի պատմության մեջ կա մի անհատականություն, որը կարողացավ միավորել միջնադարյան քնարականությունը, աշուղական և ինքնուս ժողովրդականը բարձր մասնագիտական արվեստների հետ: Այդ անհատը **Սայաթ-Նովան էր (Արուփն Սայաթյան, 1722-1795 թթ.)**՝ հանճարեղ աշուղ, ժողովրդական երգիչ, գեղարվեստական խոսքի վարպետ, ստեղծագործող և երաժիշտ կատարող: Նա իր արվեստով, գեղարվեստական մտքով ստեղծեց սիրո գեղագիտության և փիլիսոփայության մի մակարդակ, որին մինչև XVIII դարը չէր հասել և ոչ մի ստեղծագործող:

Հայ մշակույթի բազմադարյա պատմության մեջ Սա-
յաթ-Նովայի արվեստն ամենաաշխարհիկն է՝ դեմոկրատա-
կան և քաղաքացիական իր բովանդակությամբ։ Նրա հե-
ղուսն օժտված է մարդկային գեղեցկությամբ, շիտակ է և
ազնիվ, քաջ և իմաստուն։ Սայաթ-Նովան մտածում է իր ժո-
ղովրդի ճակատագրի մասին և գրում։ «*Ինձ չեմ խղճում,
ժողովրդին եմ խղճում*»։ Մի շարք բանաստեղծություննե-
րում նա խոսում է արվեստի բարձր վարպետության մա-
սին։ Նման պահանջկոտությունը գեղագիտությունը միա-
վորում է բարոյականության հետ։ Խոսելով երաժշտության
մասին՝ չի մոռանում և արվեստի մյուս ձևերը՝ գեղանկար-
չությունը, ճարտարապետությունը։ Հաճախ արտահայտու-
մ է այլաբանորեն, որը միշտ եղել է այս կամ այն գեղա-
գիտական միտքը հարստացնելու հնարավորությունը։

Սայաթ-Նովայի պեղզիան յուրատեսակ գեղարվեստական հանրագիտարան է: Այն գեղագիտորեն հարստացրեց արվեստը և՛ աշխարհի գեղեցկությամբ, և՛ մարդկային կատարելությամբ:

Հայաստանում XVIII դարի ավարտին լուսավորչությունը նոր թափ է ստանում՝ հաջորդելով կլասիցիզմին: **Մեսրոպ Թադիադյանը (1803-1858 թթ.)**, մնալով մասամբ կլասիցիզմի դիրքերում, միևնույն ժամանակ պաշտպանում է գրականությանն և արվեստին մեջ արդեն տեղ գտած լուսավորչական գաղափարների՝ համարելով, որ գեղարվեստական միտքը պետք է ծառայի ժողովրդին դաստիարակելով նրան հայրենասիրական ոգով: **Խաչատուր Աբովյանը (1805-1848 թթ.)** կտրականապես հրաժարվում է ոչ միայն կլասիցիզմի դրույթներից, այլև հին լեզվից՝ գրաբարից՝ առաջարկելով անցնել աշխարհաբարին: Նա կարծում է, որ եթե ժողովուրդը հիմնադրվել է արվեստի համար, ապա ժողովրդական լեզուն պետք է դառնա արվեստի լեզու, քանի որ այն մատչելի է բոլորին: Միայն այդ դեպքում հնարավոր կդառնա բացահայտել ժողովրդի կյանքն իր ամբողջ հարստությամբ: Աբովյանն արվեստից պահանջում է կյանքի ճշմարտի արտացոլում՝ ընդգծելով գրականության, եղանակության, գեղանկարչության ուղու:

XIX դարի կեսերին նոր թափ է ստանում քաղաքական, փիլիսոփայական և գեղարվեստական միտքը: Նշանակալից աշխուժություն է նկատվում և գաղթօջախներում՝ Կոստանդնուպոլսում, Փարիզում, Ջնյուեմհայում: Գեղարվեստական խնդիրներին է անդրադառնում **Գրիգոր Չիլինկիրյանը (1833-1923 թթ.)**, որը Ջնյուեմհայում հրատարակվող «Ճարիկ» ամսագրի խմբագիրն էր: Նա մեն տեղ էր տալիս թատրոնին՝ որպես լուսավորչական գաղափարների տարածող, շեշտելով բանավոր խոսքի մատչելիությունը:

Հայ հեղափոխական ղեմնկրատ **Միքայել Նալբանդյանին (1829-1866 թթ.)** հետաքրքրում էին և՛ հիմն, և՛ մոր հայոց լեզուները։ Հին հայոց լեզվի՝ գրաբարի կողմնակիցները շատ էին։ Այս առիթով Նալբանդյանը գրում է, որ գեղեցիկը չի լինում դրական, ոչ էլ բացասական, կարևոր է, թե որ տեսանկյունից այն կդիտես։ Դա նշանակում է, որ չբացառելով գրաբարը՝ Նալբանդյանը խորհուրդ է տալիս չբացառել և մոր, կննդանի լեզվի գեղեցկությունը։ Գեղեցիկին մա տալիս է երկու որակ՝ ամփոփոխ և փոփոխվող։ Առաջինը պատկանում է բնությանը, երկրորդը՝ ճաշակին։ Գեղեցիկի կապը բնության հետ չի կարելի դիտել անկախ ընկալման և արժեքավորման գործընթացից։ Նալբանդյանը նկատի ունի ավանդական միմեսիսը, այսինքն՝ բնության ընդօրինակումը։

Նախքան դյանը ձգտում է արվեստը մոտեցնել կյանքին: Հայտնի է նրա ելույթը՝ «Ազգային թատրոնը Կոստանդնուպոլսում» (1861 թ.), որտեղ նշում է, որ թատրոնն անհրաժեշտ է բոլոր տարիքի մարդկանց, այն ազնվացնում, տալիս է բարոյականության դասեր, ոգեկոչում բարօրության և մախազգուշացնում սխալ քայլերը: Նա տեսնում է սերտ կապ պատմության, ժողովրդի կյանքի և պոեզիայի միջև՝ հաստատելով իրականության, ճշմարտության և երևակայության փոխհարաբերությունները:

Նալբանդյանը մեծ տեղ է տալիս քննադատությանը՝ դիտելով այն որպես ժողովրդի հասարակական կյանքի չափանիշ, քանի որ «ժողովուրդն է հիմքը ազգի և ունի ազգություն»։ Նալբանդյանն առաջինն էր, որին հետաքրքրեց ժողովրդի և ազգի միջև եղած դիալեկտիկական կապը։ Նա փորձում է հաստատել, որ յուրաքանչյուր ժողովուրդի որ պատմության ընթացքում ունի ազատ զարգացման իրա-

վրնք: Գեղագիտության առաջնային խնդիրը նա համարում է արվեստի ժողովրդայնությունը՝ շեշտելով պոեզիայի և երաժշտության դերն այդ հարցում:

Նալբանդյանի համար ազգայինը և ազգությունը միասնական են: Նա գրում է, որ ժողովրդական բանաստեղծը միշտ ազգային է: Չկա ժողովուրդ, որը չունենա իր ազգին բնորոշ հատկություններ, և բնական է, որ յուրաքանչյուր ժամանակակից արվեստ պետք է ունենա իր ազգին հատուկ գծեր: Հետևաբար, ինչպես եզրակացնում է Նալբանդյանը, անհրաժեշտ է հարգել ազգային արվեստի յուրօրինակությունը:

Պայքարն արվեստի ժողովրդայնության համար շարունակվեց՝ առաջ բերելով նոր մտքեր, դիրքորոշումներ, որոնք ընդլայնում էին արվեստի գաղափարախոսության սահմանները:

Խոսելով Վերածննդի գեղագիտության մասին՝ պետք է հաշվի առնել նրա պատմական և աշխարհագրական համաճանաչները: Յուրաքանչյուր երկրում Վերածնունդը ձևավորվում էր ըստ իր սոցիալական, քաղաքական և մշակութային իրավիճակի: Իտալացիներն իրենց ծաղկուն չորս դարը վստահաբար անվանեցին Վերածնունդ՝ տեղյակ չլինելով աշխարհի տարբեր երկրների մշակութային նույնատիպ փաստերին: Իհարկե, ամենուր չէր, որ քաղաքակրթությունն ավելի բարձր էր իր զարգացմամբ, քան Վերածննդի իտալիայում:

